

## ՀԱՍՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ՆԻՍՏՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ  
ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

10ԹԽԻՍՏՎԵԼ Է ՀՀ ֆինանսների նախարարի 2016թ.-ի հունվարի 8-ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ թիվ 2-Ն հրամանով սահմանված կարգը՝ գույքագրման ցուցակները չեն կազմվել վերոհիշյալ հրամանին կից հավելվածների համաձայն: Փաստացի չեն գույքագրվել 2023 թ. -ի բնապահպանության ծրագրով շուրջ 4500.0 հազ. դրամ գումարով ձեռք բերված դեկորատիվ գնդաձև ակացիա, փարիզյան կամիս, կանադական թխկի և դեկորատիվ սալորենի ծառատեսակներ, ընդ որում՝ պետք է նշվեր նաև տնկված վայրերը: Համայնքապետարանի գույքի գույքագրման ցանկում նշվել է տոնածառ՝ 10000.0 հազ. դրամ գումարով, այն դեպքում, երբ համայնքապետարանի «ՉՀ-ԳՀԱՊԶԲ-2023/6» ծածկագրով գնման պայմանագրով ձեռք է բերվել IP65 նմուշի /ջրակայուն/ 10 մետրանոց 420 հատ սիլիկոնային սպիտակ լուսադիոդային լար, հետևաբար՝ պահեստում պետք է մուտք լիներ որպես լուսադիոդային լար՝ այլ ոչ թե տոնածառ:

Համայնքի գույքի ցանկից չեն գույքագրվել, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը, ինչպես նաև, վարձակալության հանձնված հողամասերը վարչական շրջանների խաղահրապարակները, հուշարձանները, կանաչապատ գոտիները և գերեզմանոցները, բարեկարգման այլ օբյեկտներ /կամուրջներ անցումներ և այլն/ իսկ Բջնի վարչական շրջանի գույքագրման ցուցակի 135-րդ տողում նշվել է, Բջնի բնակավայրի ջրարբիացման համակարգ, ներառյալ մեկ հատ խմոց, երկու հատ փարախ 2063 գծմ ջրագիծ ընդամենը՝ 28974.6 հազ. դրամ գումարով, եթե տարբեր նյութական արժեքներ են, հետևաբար դրանք պետք է նշել առանձին-առանձին կառուցման տարիներով և գումարներով:

Միաժամանակ 2023 թվականի երրորդ եռամսյակում Կոտայքի մարզպետարանի կողմից իրականացված իրավական հսկողության արդյունքում կազմված տեղեկանքում հստակ արձանագրվել է վերոհիշյալ հրամանի պահանջների խախտման փաստը, և տրվել է հանձնարարություն կիրառել ՀՀ գործող օրենսդրության պահանջները:

2. 2023թ. -ի 101-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծը չի ստացել դրական եզրակացություն, սակայն ներկայացվել է համայնքի ավագանու նիստում քննարկվել և հաստատվել է, ընդ որում՝ ավագանու խմբակցության գործավարի հաստիքների թիվը 3.0 միավորից սահմանվել է 2.5

միավոր, ո՛չ հանձնաժողովի նիստում, ո՛չ ավագանուն տրամադրված փաթեթում հիմնավորում չի ներկայացվել: Ըստ հավաստի տեղեկությունների կրճատվել է «Ապրելու Երկիր» խմբակցության գործավարի դրույքը: Որպես պատճառաբանություն հանձնաժողովին բանավոր կերպով ներկայացվել է «Ապրելու Երկիր» խմբակցության գործավարի թերձանրաբեռնվածությունը: Հատկանշական է, որ ծանրաբեռնվածությունն ապահովում է ավագանու խմբակցությունը, որպեսզի ապահովի իր կողմից համայնքի ղեկավարի լիազորությունների նկատմամբ վերահսկողությունը, այսինքն՝ ավագանու վերը նշյալ խմբակցությունն իր լիազորությունները ամբողջ ծավալով չի իրականացնում:

3. Համայնքի ավագանու թիվ 6-Ն որոշմամբ փոփոխություններ է կատարվել համայնքի 2024 թվականի բյուջեում, ընդգրկվել է նաև «Այլ նպաստներ բյուջեից» գումարով՝ 500 000 հազ. դրամ, հաշվի առնելով, որ դա կամավոր լիազորություն է, այլ ոչ թե պայմանագրային պարտավորություն, հետևաբար՝ որպես պարտավորություն չպետք է ձևակերպվեր: «Ֆինանսարյուջեստային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի» նիստի ժամանակ այդ հարցը բարձրացվել է, պարզաբանվել է, որ արդեն վճարվել է:

Միաժամանակ համայնքապետարանի 2024թ.-ի պահպանման ծախսերի նախահաշվին ավելացվել է 2023թ.-ին առաջացած պարտավորություններ 7403.0 հազ. դրամի չափով, այդ թվում 4456.0 հազ. դրամ աշխատավարձի ֆոնդին, որպես սոց. վճարի պարտք, պարտավորությունը առաջացել է համայնքի ղեկավարի 2023թ.-ի թիվ 1267 որոշմամբ՝ աշխատավարձի ֆոնդի 8000.0 հազ. դրամ տեղափոխվել է «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ, հատուկ վճարներ հաշվին, իսկ համայնքի ղեկավարի 2023թ.-ի հոկտեմբերի 26-ի թիվ 1448 որոշմամբ, համայնքապետարանի պահպանման ծախսերի նախահաշվի տարբեր հոդվածների նվազեցումներով աշխատավարձի ֆոնդը ավելացվել է 5145.9 հազ. դրամով, իսկ «Պարգևատրումներ դրամական խրախուսումներ» հատուկ հաշվի ծախսը ավելացվել է 116.2 հազ. դրամով, կամ տարբերությունը կազմել է 2854.1 հազ. դրամ, բերված տվյալներից երևում է, որ աշխատավարձի ֆոնդի պարտավորությունը պետք է կազմեր ընդամենը 1601.9 հազ. դրամ: Հատկանշական է, որ սոց. վճարի պարտավորության մարման ժամկետը մինչև հաջորդ ամսվա 20-ն է, ուստի այդ փաստը պլանավորման ժամանակ անհրաժեշտ էր հաշվի առնել:

40 Խախտվել է ՀՀ «ՏԻՍ» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի դրույթները Համայնքի ավագանու նիստի արձանագրություն կազմվել է թերի, ավագանու անդամների հարցապնդումները գրեթե չեն արձանագրվել:

«ԲԳ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԳԱԼՍՏՅԱՆ